մեղմ քամին դէպի հոգիների աշխարհը:

Մի խոր միստիկ բան ունի այս տեսարանը:

Իջնող գիշերւայ խոր լռութիւնը, մութ երկնակամարի վառւող աստղերը եւ ծփուն ծովի վրա այդ շողշողուն ճրագների անընդհատ սայթաքելը դէպի խորհրդաւոր հեռուն՝ այս բոլորը միացած մի ջերմ ներդաշնակութիւն են կազմում եւ յուզում հոգին, կարծես հեռուից մեկնող հոգիները իրանց հրաժեշտի բարեւն են ուղարկում մեզ:

⁂

Բուդդհիստների հաւատով հոգիները ապրում են ստորերկրեայ աշխարհում, Սայ-Նօ-Կաւարա:

Մահից յետոյ ամեն մի հոգի ներկայանում է սրտատրոփ Էմմա-Օ, դժոխքի դատաւորին: Նրա առջեւ կարդում են գործած մեղքերի երկար ցուցակը, մինչդեռ դէմը բռնած հայելիի մէջ նա տեսնում է իր բոլոր վատ արարքները:

Բուդդհիստի դժոխքն ու արքայութիւնը քիչ են տարբերւում քրիստոնէականից: Նոյն տանջանքները ու նոյն երանութիւնը, միայն անշուշտ այս բոլորը ճապոնական շրջապատի մէջ:

Ոգիների խորհրդաւոր աշխարհում ամենից հետաքրքրական է Ժիզօի կերպարանքը. երեխաների հովանաւորն է նա, որովհետեւ խեղճ փոքրիկ երեխաները նոյնպէս ընկնում են ստորերկրեայ աշխարհը:

Նրանք պարտաւոր են այնտեղ կառուցանելու մանր քարերից փոքրիկ աշտարակներ, բայց չար ոգիները շարունակ գալիս են, քանդում ու խեղճ երեխաներին հանգիստ չեն տալիս: